

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ս. ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ազգիս Վեհափառ Հայրապետը այս տարի Սեպտեմբերի 12–ին, Ս. Խաչի վերացման տօնին հանդերձեալ է Աստուծոյ յաջողութեամբ Ս. Միւռոն օրհնել, ուստի և յայտարարուում է ի գիտութիւն համօրէն Հայոց։

Հայրապետական տիրէնութիւններ.

Կոնդակ Կ. Պոլսի Ամենապատիւ Պատրիարք Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեանի անունով, որով յանձնարարուեց արտօնութիւն ձեռք բերել, որպէսզի Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի ընթացաւարտ տաճկահպատակ աշակերտներն ընդունուեն Տաճկաց բարձրագոյն դպրոցները։ 1 յունիսի. թ. 1451։

Կոնդակներ Ռուսաստանի բոլոր թեմական Առաջնորդների անունով, որոնցով պատուիրուեց կազմել և ներկայացնել Նորին Սրբութեան Ազգիս Վեհափառ Հայրապետին թեմերի բոլոր հայ քահանաների ծառայութեան ցուցակները։ 2 յունիսի. թ. 1457—1462։

Գրութիւն Կ. Պոլսի Ամենապատիւ Պատրիարք Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեանի անունով, որով ուղարկուեց Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի Վարչութեան յայտարարութեան և Ճեմարանի մի քանի տաճկատանցի սաների խնդրի պատճէնները՝ զինուորակոչի և Օսմանեան բարձրագոյն դպրոցներում նոյն սաներին տրուելիք արտօնութիւնների մասին հարկաւոր դիմումներ անելու համար։ 2 յունիսի. թ. 1463։

Գրութիւն Առևտրական և Արդիւնաբերական Նախարարութեան Դիւանատան անունով, որի հետ ուղարկուեց Նոր Նախիջևանի Հայոց Թեմական Դպրանոցի կանոնադրութեան մի օրինակը։ 5 յունիսի. թ. 1477։

Կոնդակ Երևանի Փոխ—Թեմական Տ. Խորէն վարդապետ Մուրադբէգեանի անունով, որով հաստատուեցին իրանց պաշտօններում Երևանի Հայոց Թեմական Դպրանոցի Նորընտիր Հոգաբարձութեան անդամները և փոխ—անդամները։ 5 յունիսի. թ. 1479։

Գրութիւն Բարձրագոյն Տ. Տ. Բարգէն և Արտակ վարդապետների անունով, որով յանձնարարուեց խմբա-

գրել Մայր Աթոռի Տպարանի համար կազմուելի կանոնագրութիւնը և մատուցանել ի հաստատութիւն Նորին Սրբութեան։ 6 յունիսի. թ. 1482։

Գրութիւն Կոմկասի Ուսումնարանական Հոգաբարձուի անունով, որով շնորհակալութիւն յայտնուեց՝ նրա ուղարկած «Կոմկասեան դպրոցների վիճակի մասին հաշուեգրքի» համար։ 6 յունիսի. թ. 1483։

Կոնդակ Տ. Յովսէփ Արքեպիսկոպոս Սարաճեանի անունով, որով տեղեկութիւն տրուեց նորա Վանայ Առաջնորդ ընտրուելու մասին և հրաւիրուեց գնալ իւր պաշտօնավայրը։ 9 յունիսի. թ. 1493։

— Վրաստանի թեմի Հայոց Առաջնորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի անունով, որով տրուեց զանազան հրահանգութիւն Տփխիսի Ներսիսեան թեմական Հոգևոր Դպրանոցի պաշտօնը լրացրած հոգաբարձուների ընտրութեան մասին։ 9 յունիսի. թ. 1494։

Գրութիւն Կ. Պոլսի Ամենապատիւ Պատրիարք Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեանի անունով, որով յանձնարարուեց յայտնել Ադրիանուպոլսի Ազգային գաւառական ընդհանուր ժողովին, որ Տ. Դանիէլ Ծ. վարդապետ Յակոբեանը կձեռնադրուի եպիսկոպոս այն պայմանով, որ շարունակէ Երուսաղէմի Պատրիարքական Տեղապահութեան պաշտօնը։ 9 յունիսի. թ. 1496։

Կոնդակ Տփխիսի Մարիամեան—Յոփնանեան օրիորդաց Դպրոցի Հոգաբարձութեան անունով, որով նորընտիր Սարգիս Մալխասեանը հաստատուեց երեք տարով դպրոցի տեսչական պաշտօնում։ 9 յունիսի. թ. 1498։

Գրութիւն Ղարաբաղի Հայոց Կոնսիստորիայի անունով, որով պատուիրուեց ծխական հոգաբարձուների ընտրութիւնների մասին տեղեկութիւն տալ Նորին Սրբութեան՝ հաստատութեան կոնդակ տալու համար։ 11 յունիս. թ. 1506։

Գրութիւն Աստրախանի Կոնսիստորիայի անունով,

որով պատուիրուեց տաճկատանցի Գրիգորիս քահանայ Գարաքէհեանին և Աթանագինէ քահանայ Գինոսեանին, որոնք անցել են իրանց երկրից և քահանայագործութիւն են կատարում, անմիջապէս երկիր ուղարկել։ 13 յունիսի. թ. 1515։

Գրութիւն Սևանայ վանքի վանահայր Տ. Սարգիս Եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի 22 սաներին վանքում ապրելու համար յարմար բնակարան տալ մինչև օգոստոսի վերջը և խնամք տանել նոցա վրայ։ 15 յունիսի. թ. 1525։

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինօդի անունով, որով Տ. Տ. Բաբգէն, Արտակ և Ներսէս Մելիք-Թանգեան վարդապետները կարգուեցան Ս. Միւռոնօրհնութեան առթիւ եկած հիւրերի և ուխտաւորների ընդունող Յանձնաժողովի անդամներ։ 16 յունիսի. թ. 1528։

— Երևանի Փոխ-Թեմակալ Տ. Խորէն վարդապետ Մուրադբէգեանի անունով, որով հաստատուեցան՝ պ. Արշակ Զինլինգարեան Թեմական Խորհրդի անդամ և Յ. Չախմախսազեան, Հ. Խուդաբաշեան և Դ. Պողոսեան փոխ-անդամութեան պաշտօններում։ 16 յունիսի. թ. 1529։

Գրութիւն Վրաստանի Առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց յայտնել Մայր Տաճարի համար կազմուած ճարտարապետների Մասնախմբին՝ ուղարկել Էջմիածին իրանց ներկայացուցիչներին մրցման վերջնական պայմանները խմբագրելու։ 17 յունիսի. թ. 1532։

Գրութիւն Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց տալ Բագուի գործակալ Տ. Զաւէն վարդապետին Շամախու թեմի համար երկու սրուակ Ս. Միւռոն։ 17 յունիսի. թ. 1542։

Գրութիւն աքսորականաց երեխաների Որբանոցի Հոգաբարձուհի Մարիա Պետրովնա Վատացիի անունով, որով

ուղարկուեց ի նպաստ Որբանոցին Նորին Վեհափառութեան կողմից 100 ռուբլի։ 17 յունիսի. թ. 1544։

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով Դիրք գիւղի Ղևոնդ քահանայ Աբուլեանցն իւր գայթակղեցուցիչ ընթացքի պատճառով կարգալոյծ եղաւ։ 17 յունիսի. թ. 1546։

Կոնդակներ Ռուսաստանի բոլոր թեմական Առաջնորդների անունով, որոնցով պատուիրուեց կարգադրել, որ թեմերի հայ քահանաները ճշտութեամբ արձանագրեն չափաբերական մատեաններում ծնունդը, պսակը և մահը։ 17 յունիսի. թ. 1547–1552։

— Երևանի Փոխ-Թեմական Տ. Խորէն վարդապետ Մուրադբէգեանի անունով, որով հաստատուեց Թեմական ժողովի կազմած թեմում գտնուած վանքերի մոմից և ելից նախահաշիւը։ 18 յունիսի. թ. 1553։

Գրութիւն Կ. Պոլսի Ամենապատիւ Պատրիարք Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանի անունով, որով յանձնարարուեց ուղարկել Ամերիկայի Հայոց առաջնորդական թեկնածուների եռանուն ցանկը։ 18 յունիսի. թ. 1555։

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկուեց Ղարաբաղի Կոնսիստորիայի նախագահող Տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանի յայտարարութիւնը և առաջարկուեց տնօրինել նորա ճանապարհածախսի խնդիրը նուխուց Շուշի գնալ—գալու համար։ 18 յունիսի. թ. 1556։

Գրութիւն Տ. Տ. Բարգէն և Արտակ վարդապետների անունով, որով յանձնարարուեց քննել Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի մայիս-յունիս ամիսների հաշիւները։ 19 յունիսի. թ. 1559։

Գրութիւն Մայր Աթոռի գանձապահ Տ. Արտակ վարդապետի անունով, որով պատուիրուեց ստանալ ի պահ Գէորգեան Հոգևոր Ճեմարանի դրամարկղում եղած դրամն ու արժէքաւոր բոլոր թղթերը յանձնողական ցուցակով։ 20 յունիսի թ. 1565։

Գրութիւն Վրաստանի Կոնսիստորիայի Նախանդամ Տ. Եփրեմ վարդապետի անունով, որով պատուիրուեց ստոյգ տեղեկութիւն ժողովել «Հայրիկեան ֆոնդի» անունով ժողոված դրամի մասին և տեղեկութիւն տալ Նորին Սրբութեան աղգիս Վեհափառ Հայրապետին։ 20 յունիսի. թ. 1573։

Կոնդակ Վրաստանի Առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց Ախալցխայի վիճակի համար փոխանորդի ընտրութիւն կատարել։ 20 յունիսի. թ. 1574։

— Տեղապահ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի անունով, որով յանձնարարուեց կառավարել Ս. Էջմիածնի վանքը մինչև Վեհ. Կաթուղիկոսի Տփխիսից վերադառնալը։ 24 յունիսի. թ. 1601։

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց օրադիրներն արձակել Նախագահող Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի ստորագրութեամբ և տրուեց զանազան հրահանգներ։ 20 յունիսի. թ. 1602։

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրուեց Լևոն վարդապետ Փսերեանին Գանձակի Փոխանորդ կարգելու համար հարկաւոր տնօրէնութիւնն անել։ 26 յունիսի. թ. 1627։

— Տ. Լևոն վարդապետ Փսերեանի անունով, որով իրան Գանձակի Փոխանորդ կարգելու մասին տեղեկութիւն տրուեց։ 26 յունիսի. թ. 1628։

— Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոսի անունով, որով Տ. Լևոն վարդապետին Գանձակի Փոխանորդ կարգելու մասին տեղեկութիւն տրուեց։ 26 յունիսի. թ. 1629։

Գրութիւն Կովկասի Տ. Փոխարքայի անունով, որով ներկայացուեց Հայոց եկեղեցական—ծխական դպրոցների կանոնադրութեան փոփոխած նախագիծը և բացատրական յիշատակագիրը։ 1 յուլիսի. թ. 1631։

Գրութիւն տեղական Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի անունով, որով յանձնարարուեց Անգլիական Վիլիամ եպիսկոպոսին պատշաճ ընդունելութիւն և հիւրասիրութիւն ցոյց տալ։ 3 յուլիսի. թ. 1634։

— Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոսի անունով, որով արտօնեց կարգադրել Գանձակեցի Մկրտիչ և Եղիսաբէթ Աֆանասեանց ամուսինների նուիրաբերած դպրոցական շինութիւնը յանձնել տեղի Ս. Լուսաւորիչ եկեղեցուն իբրև սեպհականութիւն և ամեն տարի նոցա մահից յետոյ հոգեհանգիստ կատարել։ 7 յուլիսի. թ. 1656։

— Վրաստանի Հայոց կոնսիստորիայի անունով, որով պատուիրուեց Կուր գետի աւազաբեր կղզին, իբրև շնորհ վերադարձնել Վանաց աւագ եկեղեցուն, յատկացնելով նրա ամբողջ արդիւնքը նոյն եկեղեցու ծխական դպրոցին։

Գրութիւն Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգութեան Մասնախմբի նախագահ Տ. Եփրեմ վարդապետի անունով, որով ուղարկուեց կենտրոնական Յանձնաժողովի վերամշակած վերանորոգութեան մրցման ծրագիրը։ 9 յուլիսի. թ. 1659։

Կոնդակ Վարագայ վանքի հոգաբարձութեան անունով, որով ուղարկուեց Ժամհարեանց եղբարց նուիրած 500 ռուբլու և Մոսկուայի Հայոց Եկեղեցական խորհրդի 100 ռուբլու փոխանակագիրը։ 14 յուլիսի. թ. 1663։

— Հին Ղրիմի Ս. Խաչ վանքի վանահայր Տ. Իսահակ վարդապետի անունով, որով պատուիրուեց տալ վանքի արդիւնքից տարեկան նպաստ Հին Ղրիմի դպրոցին 400 ռուբլի և Սուրաշի գիւղի դպրոցին 200 ռուբլի։ 18 յուլիսի. թ. 1666։

Կոնդակ Ղարաբաղի կոնսիստորիայի նախանդամ Տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանի անունով, որով վերադարձուեց պատգամաւորական ընտրութեան գործը և բեկանելով երեք գործակալութեան պատուիրակների ընտրութիւնը,

պատուիրուեց նոր ընտրութիւն կատարել այդ շրջաններում, նոյնպէս և պատուիրակների և պատգամաւորների ընտրութիւն կատարել Շուշի և Լենքորան քաղաքներում։ 19 յուլիսի. թ. 1684։

Կոնդակներով հաստատուեցան Ղարաբաղի Հայոց թեմի Նուխի քաղաքի ս. Աստուածածին և ս. Մինաս եկեղեցիների և Սարգսաշէն, Ջափար Ուշաղը, Բաուանի, Ղարաքուլաղ, Նորաշէն, Հադրութ, Կախ ուան, Բարագլուխ և Խրամորթ գիւղերի հոգաբարձուները և անձնափոխանորդներն իրենց պաշտօններում. 19 յուլիսի. թ. 1685—1695։

Հայրապետական գոհունակութիւն եւ օրհնութիւն.

Գրութիւն Կոկանդի Տ. Ներսէս քահանայ Աբրահամեանի անունով, որով օրհնութիւն և գոհունակութիւն յայտնուեց տեղական եկեղեցու և ծխական դպրոցի հիմնադրութեան օրհնութեան առթիւ։ 11 յունիսի թ. 1503։

Կոնդակ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդի անունով, որով գոհունակութիւն յայտնուեց ուղարկած ընկերութեան 1908–1909 թ. գործունէութեան տեղեկագրի համար։ 13 Յունիսի. թ. 1516։

Գրութիւն պ. Գրիգոր Մարգարեանի անունով, որով շնորհակալութիւն յայտնուեց ուղարկած 2 օրինակ գրքի համար։ 17 յունիսի. թ. 1543։

Գրութիւն Թոքախտի դէմ մաքառող Կովկասեան Ընկերութեան անունով, որով շնորհակալութիւն յայտնուեց Նորին Սրբութեան Ընկերութեան պատուաւոր անդամ ընտրելու համար։ 17 յունիսի. թ. 1545։

Կոնդակ Տփխիսի ի նպաստ տաճկահայ տառապեալների Հանգանակիչ Մասնաժողովի Նախագահի և անդամների անունով, որով յայտնուեց գոհունակութիւն և օրհնութիւն իրանց պարտքը կատարելու համար։ 18 յունիսի. թ. 1558։

Գրութիւն Կովկասի Ուսումնարանական Հոգաբարձուի անունով, որով շնորհակալութիւն յայտնուեց ուղարկած «Տփխիսի միջնակարգ դպրոցների սաների 1909 թ. Քութայիս գնալու Էկսկուրսիա» գրքի համար։ 19 յունիսի. թ. 1562։

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան Լուգանսկ քաղաքացի պ. Սարգիս Խաչատրեան Փափազեանցի անունով իւր կարողութիւնը՝ գրամ և շարժական և անշարժ գոյք 60—70 հազար ռուբլի արժողութեան քաղաքի Հայոց աղօթատան օգտին կտակելու համար։ 24 յունիսի. թ. 1598։

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան Գանձակեցի Մկրտիչ և Եղիսաբէթ Աֆանասեանց ամուսիններին անունով Ս. Լուսաւորիչ եկեղեցու գաւթում իրենց սեպհական հոյակապ շինութիւնը նոյն եկեղեցուն նուիրաբերելու համար։ 7 յուլիսի. թ. 1655։

Հայրապետական պարգեւատրութիւն.

Կոնդակ աւագ քահանայութեան Տ. Յովսէփ քահանայ Աբուլեանի անունով։ յուլիսի 9. թ. 1660։

ԲԱՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Յունիսի 7-ին Սինոդը որոշեց. թոյլ տալ Նոր-Նախիջևանի և Ռեսարաբիոյ կոնսիստորիային ծախսել վիճակային արդիւնքից 200 ռ. թեմի առաջնորդ հանգուցեալ Գրիգոր արքեպիսկոպոս Սագինեանցի գերեզմանի վրայ, որ գտնուում է եկեղեցու գաւթում, տապանաքար դնելու համար։ թ. 376.

Նոյն օրը Սինոդը լսելով Վեհափառ Կաթուղիկոսի անցեալ մայիսի 20-ի № 1299 կոնդակը՝ որոշեց պատուիրել Մայր-Աթոռի գանձապահին տալ Տ. Խորէն վարդապետ Լազարեանին ռոճիկ ըստ պաշտաման Վանական Կառավարութեան անդամի՝ սկսած սոյն յունիսի 1-ից։ թ. 375.